

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ

(Ծննդյան 850-ամյակի առթիվ)

Պրոֆ. Ա. Ս. ԿՄՈՅԱՆ

X—XIV դարերում հայ մշակույթի ու գիտության ընդհանուր զարգացմանը համընթաց մեծ վերելք ու զարգացում է ապրում բժշկագիտությունը: Այդ դարերում գործել են բժշկական հատուկ դպրոցներ՝ «Բժշկանոցներ», կատարվել են դիաֆերձումներ, կենդանահատումներ, որոնք առատ նյութ են տվել անատոմիական ու ֆիզիոլոգիական ուսումնասիրությունների համար: X—XI դդ. բժշկությունը անցնում է աշխարհիկ բժիշկների ձեռքը, որոնք լայնորեն օգտվում են անտիկ, բյուզանդական և իրենց ժամանակակից արաբական բժշկական գրականությունից: Նկատելի է դառնում բժշկական տեսությունը հորժնականի հետ առնչելու մի ընդհանուր ձգտում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ շրջանից մեզ են հասել հարյուրավոր բժշկագիտական աշխատություններ: Նրանց հեղինակների մեջ ամենախոշոր դեմքերից է Մխիթար Հերացին, որի մասին կենսագրական կցկտուղ տեղեկություններ են հասել մեզ:

Հերացին ծնվել է Պարսկաստանի Հեր (այժմ Խոյ) քաղաքում: Որոշակի սովյալներ չեն պահպանվել ո՛չ նրա ծննդյան տարեթվի, ո՛չ էլ բժշկական կրթություն ստանալու հանգամանքների վերաբերյալ: Սակայն մի շարք փաստերի օգնությամբ հնարավոր է մոտավորապես որոշել նրա ծննդյան տարեթիվը, կյանքի ու գործունեության հիմնական կողմերը:

Այսպես, նրա ժամանակակից ներսես Շնորհալին մինչև կաթողիկոս դառնալը, այսինքն՝ 1166 թ. առաջ իր գրած «Յաղագս երկնից զարդուց» պոեմի մեջ Հերացուն մեծարում է որպես բազմահմուտ գիտնական բժշկի ու աստղագետի: Մյուս կողմից, եթե նկատի ենք ունենում, որ նա գիտեր արաբերեն, պարսկերեն և հունարեն, տիրապետում էր ժամանակի բնագիտության և բժշկագիտության նվաճումներին, ստեղծել էր մի շարք ծանրակշիռ գիտական աշխատություններ, որի համար էլ 1160-ական թթ. իր ժամանակակիցների կողմից արժանացել էր «Մեծ բժշկագետ», «Իմաստուն բժիշկ», «Մեծ Մխիթար» պատվավոր կոչումների, մի հանդամանք, որ ենթադրում է 45—50 տարեկան հասակ, ապա կարելի է ասել, որ Հերացին ծնված պետք է լինի 1110-ական թթ., հավանաբար հենց 1118 թ.:

Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» հայտնի աշխատության հեղինակային առաջաբանից ստույգ հայտնի է դառնում, որ նրա բժշկական, մանկավարժական և դիտական գործունեությունը ընթացել է Կիլիկյան Հայաստանում, ուր պատանեկան շրջանում Պարսկաստանից տեղափոխվել և բնակություն էր հաստատել: Ենթադրվում է, որ բժշկական կրթությունը նա պետք է ստացած լինի այստեղի մշակույթի օջախներից մեկում:

1184 թ. նա գրում է «Ջերմանց մխիթարութիւն» դասական աշխատութիւնը, որը նվիրված է միջին դարերում հասկանալի պատճառներով ավելի լայն տարածում գտած մալարիայի, տիֆային հիվանդութիւնների, ժանտախտի, բնական ծաղկի, թոքային տուբերկուլյոզի, կարմիր քամու, հինգ և վեցօրյա նուպայածե տենդերի և այլ սուր վարակիչ հիվանդութիւնների պատճառագիտութեան, ախտածնութեան, կլինիկական պատկերը բնորոշող ախտանշանների ու դրանց բուժման և հիվանդի խնամքի հարցերի նկարագրութեանը:

Իր առաջ ծառացած սուր վարակիչ հիվանդութիւնների և ընդհանուր ախտաբանութեան բարդ ու կնճռոտ հարցերը Հերացին լուծել է դարաշրջանի բժշկագիտութեան ընդհանուր մակարդակի համեմատ: Ավելին, նա մերժել է միշտ հետադեմ դրույթներ ու չպատճառաբանված կիրառական միջամտութիւններ և պաշտպանել, առաջ է քաշել նորը, առաջադիմականը:

Այսպես, օրինակ, մարդուն և նրա մոտ հանդես եկող ախտաբանական երևույթները Հերացին դիտում է արտաքին միջավայրի բաղմամպիսի ազդակների հետ սերտորեն կապակցված:

Հիվանդութիւնների առաջացման խնդրում նա մեծ տեղ է հատկացնում: Երկրի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին, սննդի և ջրի որակին, սնվելու կարգին, աշխատանքի բնույթին, ինչպես նաև մարդու մարմնական կառուցվածքին ու նյարդա-հոգեկան աշխարհի վիճակին և այլն:

Այնուհետև, ընդունելով «ջերմերի», այսինքն՝ սուր վարակիչ հիվանդութիւնների ախտածնութեան խնդրում հղահյուսթային (հումորալ) ախտաբանութեան ուսմունքը, նա առաջ է քաշում օրգանիզմի հիմնական շորս հեղուկների (արյան, լորձի, սև ու դեղին լեղիների) ոչ թե քանակական տեղաշարժերի սկզբունքը, այլ դրանց հետ կապարկող որակական փոփոխութիւնների «բորբոսանելու» երևույթը:

«Իսկ այն ազգ ջերմն,—գրում է Հերացին,—որ պատճառքն գիճութիւնքն լինին, որք են շորս նիւթն, բորբոսային ասեն. զի յորժամ բորբոսն ի ներքս իյերակսն լինի ի յարէն՝ ի յար և ի սուր և այրեցող ջերմանն, հումայի մահրիւլայ կասեն. ապա թէ դուրս յերակացն բորբոսին, այն են նուպայով ջերմերն»¹:

Մի շարք հայ, արտասահմանյան և ռուս գիտնականներ (բժ. Վ. Թորգոմյան, Ֆերրան, է. Զեյդել, Լ. Հովհաննիսյան, Խ. Մելիք-Փարսադանյան, Մ. Դունին և տողերիս հեղինակը), հետազոտելով «բորբոսային ջերմ» տերմինի իմաստը, հանգիլ են այն կարծիքին, որ Հերացին դրանով ընդունել է վարակի (ինֆեկցիայի) գաղափարը: Ավելին, «բորբոսը» նյութական ծագում ունի, որը կուտակվելով մարմնի որևէ օրգանում՝ աճում, բաղմանում է և իրենից արձակում է մարդու համար օտարամուտ տաքութիւն ու պայմանավորում է հիվանդութիւնը: Փարիզի բժշկական ակադեմիայում կարդացած իր ղեկուցման մեջ բժ. Վ. Թորգոմյանը «բորբոսային ջերմ» տերմինի տակ նկատել է «այն գաղափարը՝ որով արդի բժշկութիւնը կարտաշայտվի, երբ infection կըսէ: Ըստ այսմ՝ բորբոսայինը եւ կընդունիմ իբր համանշանակ infectieuse-ի կամ septique-ի (ապականարար)»²: Իսկ է. Զեյդելը, կանգ առնելով այս հարցի վրա, ասել է, որ ինքը չի կամենում Մ. Հերացուն բարձրացնել, մեծարել համարելով նրան մանրէաբանութեան նախակարգապետ: Սակայն օրյեկտիվ և

¹ Մ խ ի թ ա Ր Հ ե Ր ա ց ի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 4:

² «Հայաստանի կոչնակ», № 21, Նյու-Յորք, 1925, էջ 652:

անհերքելի փաստ է, որ մինչև մանրէաբանության դարը ոչ մի բժիշկ չի օգտագործել ինֆեկցիոն պրոցես արտահայտող այնպիսի տերմին, որը իրականությանն այնքան մոտ կանգնած լինի, ինչպես այդ արել է Մխիթար Հերացին³:

Մխիթար բժշկապետը դեմ է արտահայտվել ամեն մի հիվանդության բուժման առիթով, որպես անկասկած օգտակար միջամտության, արյուն բաց թողնելուն: Իր բժշկարանում նա պատմում է, որ ինքը շատ դեպքերի ականատես է եղել, երբ հյուծված, ուժաղրկված հիվանդներից արյուն են բաց թողել և նրանք բոլորն էլ մահացել են: Ավելի հետաքրքրականն այն է, որ նման դեպքերում նա արգելում է տուբերկուլյոզով հիվանդներին ոչ միայն արյուն բաց թողնելը, այլև բաժակներ գցելը. «...և ես տեսայ ի յիմ ժամանակս, որ ի կատարել ժամն հիւանդութեան երակն առին, և մեռան շատք. և այլ տեսայ՝ որ ապակիք արկ, նա հիւանդն վատուծ էր, մեռաւ: Չէ պատեհ՝ յորժամ հիւանդն վատուծ լինի, արին հանել...»⁴:

Մինդեռ հանրահայտ է, որ ամենուրեք և հատկապես միջնադարյան եվրոպական երկրներում բոլոր հիվանդությունների բուժման նպատակով խրախուսվում էր արյուն բաց թողնելու գործողությունը: Ավելին, բանն այն է, որ շատ դեպքերում մահ բերող այդ գործողությանը տալիս էին «տեսական հիմնավորում»: Այսպես, օրինակ, իտալացի ականավոր բժիշկ Լեոնարդո Բոտալինին, որին 1564 թ. հրավիրում են Ֆրանսիա՝ որպես արքունիքի բժիշկ, գրել է. «Որքան ջրհորից շատ քաշեք փշացած ջուրը, այնքան շատ կգոյանա լավը, որքան մանուկը շատ ծծի մոր կուրծքը, այնքան շատ կավելանա մոր կաթը»:

Ըստ Մխիթար Հերացու հիվանդությունը ճիշտ ախտորոշելու և ճիշտ բժշկելու համար պետք է լավ ծանոթ լինել մարդու նորմալ անատոմիային և նրա րառնվածքին՝ ֆիզիոլոգիային:

«Վասն շինուածոց և յօրինուածոց աշացն» խորագիրը կրող աշխատության մեջ, որը մեզ է հասել հետագա դարերի արտագրությամբ, Մխիթար Հերացին գրում է. «Ամեն բժիշկ, որ աշաց կամենայ ծառայել պիտի որ զկազմութիւն աշացն կարգայ, որ իւր ստածումն իմաստութեամբ լինի»⁵: Վերոհիշյալ տողերի համաձայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանում եղել են բժիշկներ, որոնք, ինչպես վկայում է Հերացին, զբաղվել են միայն տկնաբուժությամբ: Նրանցից մեր բժշկապետը իրավացիորեն պահանջել է, որ լավ իմանան աչքի անատոմիան և ֆիզիոլոգիան: XII դարում արդեն, մահասպարտյալների կենդանահատումների տվյալներից, Հայաստանում ունեին այն պատկերացումը, որ գլխուղեղի, ողնուղեղի և զգայական 5 օրգանների միջև գոյություն ունի անատոմիական կապ և որ նրանց ֆիզիոլոգիական ֆունկցիաները համագործակցված են:

Այդ ըմբռնումներից ելնելով, Հերացին մերժում է Կլավդիոս Հալենի լոկալ ախտաբանության, ինչպես ինքն է գրում՝ «Locus affectio» հետադեմ ուսմունքը և պաշտպանում է մարդու ամբողջական, միասնական օրգանիզմ լինելու առաջադեմ գաղափարը:

³ E. Seidel, Mechtires „Frost bei Fibern“, Leipzig, 1908.

⁴ Մ. Հերացի. նշվ. աշխ., էջ 66:

⁵ Л. Меньс, История медицины, М., 1926, էջ 106:

⁶ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 464, էջ 59ա:

⁷ А. С. Кцоян, Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета феодальных отношений, «Известия» АН Арм. ССР, Ереван, 1957, № 5, էջ 81—88:

Ահա հիվանդությունները, որոնք ախտաբանական երևույթի, մեր բժշկապետի տված դիպուկ բնորոշումը. «Եւ են բնութեան գործերն այսոքիկ՝ ցանկութիւն երակրոյն և ըմպելոյն, կանգնելն և զնալն և արթնութիւնն, յառնելն և նստելն և մերձաւորութիւնն, և այլ ամենայն բնութեան գործն որ ի մեզ են թէպէտ և ասացաք զբնութեան գործերն՝ որ խափանին ի ջերմերոյն և ի յայլ ամենայն ցեղ հիւանդութենէ, սակայն ոչ կատարեալ խափանումն, այլ մասնական ինչ, դի մահուամբ միայն խափանին բնութեան գործերն կատարեալ»⁸։

Մեջ բերված տողերը բացահայտ կերպով ցույց են տալիս, որ Մխիթար Հերացին ճիշտ է ըմբռնել մի կողմից՝ մարդու և արտաքին միջավայրի, մյուս կողմից՝ նրա օրգան-սխտեմների նորմալ ֆիզիոլոգիական գործունեության և ախտաբանական երևույթների միջև գոյություն ունեցող առնչակցությունը։

Հայտնի է, որ Կ. Հալենը Հիպոկրատի (460—377 մ. թ. ա.) առաջարկած՝ մարմնի բնական-կենսական ուժեր հասկացությունն արտահայտող «physic» տերմինի տակ զրեց դերբնական դիտակցված ուժի իմաստը, որից ելնելով, Հալենը ասում էր, թե հիվանդության բուժման խնդրում բժիշկը պետք է միջամտի նրա զարգացման միայն երրորդ փուլում, երբ կհամոզվի, որ հիվանդը այլևս չի կարողանում հաղթել հիվանդությանը։

Այս հարցի վերաբերյալ Մխիթար Հերացին միանգամայն հակառակ տեսակետ է պաշտպանել։ Իր ունկնդիրներին նա Եովորեցնում էր, որ ամեն մի թեթև համարվող ախտաբանական երևույթին պետք է ժամանակին ուշադրութուն դարձնել և ապաքինել, այլապես նա կարող է զարգանալ և անհաղթահարելի դառնալ։ Նա գրում է. «և ոչ մի փոքր ի հիվանդութեանց դիպելոց զի սակաւ հիւանդութեան, յորժամ անփոյր լինի և յամէ, զօրացեալ բազմաւայ և յաղթէ մարմնոյն»⁹։

Մեք բերված տողերը վկայում են, որ մեր բժշկապետը հանդիլ է այնպիսի առաջադեմ եղրակացության, որը կատարելապես համընկնում է ժամանակակից բժշկագիտության ըմբռնումների հետ։ Հերացին կողմնակից է եղել բուժման ակտիվ եղանակին և հիվանդությունների կանխմանը՝ պրոֆիլակտիկային։

Ախտորոշման նպատակով հիվանդների քննությունը կատարելիս Հերացին կիրառել է նրանց մարմնի արտաքինը մանրադնին հայելու, զարկերակի, փորի խոռոչի օրգանները շոշափելու, բախման և ունկնդրելու օբյեկտիվ եղանակները, ինչպես նաև մեղի, խուխի, կղկղանքի և այլ արտաթորանքների ֆիզիկական հատկությունների քննությունը։ Այն էլ ասենք, որ Մխիթար Հերացին ախտորոշման նպատակով կազմել է հիվանդին ուղղվելիք տասը հարցերի ցուցակ, այնպես, որ այդ հարցերին հիվանդների տված պատասխանները մեծապես օգնում են ոչ միայն հիվանդության ախտորոշմանը, այլ նաև նրա բուժման ու կանխադուշակման և կանխարգելման հարցերի ճիշտ ըմբռնմանը։

«Ջերմանց մխիթարութեան» մեջ նրա տված բոլոր հիվանդությունների մահճարութեան (կլինիկական) պատկերը բնորոշող ախտանիշների նկարագրությունները անթերի են և միանգամայն համոզիչ։ Մխիթար Հերացուն քաջ ծանոթ են եղել ժամանակակից բժշկությանը հայտնի մալարիային հիվանդու-

⁸ Մ. Հերացի, նշվ. աշխ., էջ 3։

⁹ Նույն տեղում, էջ 2։

թյունների բուռը ինքնուրույն կլինիկական ձևերը։ Նա մանրամասն նկարագրում է «մի օրեայ», «օր ընդ մէջ» կամ «երեքօրեայ» (malaria tertiana), «երկու օր ընդ մէջ» կամ «չօրերօրեայ» (malaria gautana) մալարիային հիվանդությունների, դրանց զուգորդած և այլ բարդացած կլինիկական ձևերի համար բնորոշ ախտանիշները։

Տիֆային հիվանդության սկզբնական շրջանում Հերացին մեծ ուշադրություն է դարձնում հիվանդի դեմքին և բերանի խոռոչում տեղի ունեցող փոփոխություններին՝ նշելով հիվանդի երեսի, հատկապես աչտերի կարմրությունը, աչքերի երակների լիարյունությունը, բերանի առաստաղի ու նշիկների բորբոքային երևույթները։ Հիվանդի գլխացավերը գնալով ուժեղանում են, նրա վիճակը ծանրանում է։ Հետաքրքրական է, որ Հերացին աննկատ չի թողնում և նկարագրում է մաշկի վրա երևան եկած կարմիր, սև կամ գունատ կանաչավուն յաները։

Ահա այս հարցերին վերաբերող հատվածը.

«Իսկ նշաննին՝ որ հետ այդ ջերմանդ (տիֆի—Ա. Ա.) երևենայ՝ այս են, որ բերանոյն առաստաղքն ուռչին, և խնծորքն. գլուխն ցաւի և ծանրանայ, և երեսն կարմրի, մանաւանդ աչտերն. աչացն երական և քներոյն ուռչին, և լինի որ կարսիւ շտեր (ցանը—Ա. Ա.) երևենան կամ դէպ ի կանանչն»¹⁰։

Մխիթար Հերացին իմացել է տիֆային հիվանդությունների հսկավարականության մասին։ Ուրիշ կերպ չի կարելի բացատրել նրա խրատական խոսքերը այն մասին, որ նման հիվանդներից հարկավոր է զգուշանալ, հեռու կենալ, այսինքն վարակվելուց խույս տալ։ Այսպիսի զգուշացումներ նա չի անում մյուս տենդային հիվանդությունների դեպքում։

Տիֆային հիվանդությունների բուժման ժամանակ նույնպես նա կիրառում է սիմպտոմատիկ, այսինքն՝ ախտանշական երևույթների դեմ նշանակվող բուժման սկզբունքը։ Այսպես, իր բժշկարանում Մ. Հերացին առանձին ենթաբաժիններով տվել է բարձր տաքության, գլխացավի, սրտի ուժեղ բարախումբների, փորկապության, լուծի, ընդհանուր թուլության և ախտաբանական այլ երևույթների դեմ հատուկ դեղատոմսեր։

Ուշագրավ է տիֆային հիվանդությամբ տառապող հիվանդի սննդապահճի բաժինը։ Հիվանդին տրվող ճաշերի մեջ չենք հանդիպում ոչ մի տեսակի մսեղեն ճաշի, ձկնեղենի ու խեցգետնի։ Հիվանդի ուտեստի մեջ չկա գինի՝ ո՛չ ջրի հետ խառնած, ո՛չ էլ առանց ջրի։ Նա գրում է. «...և կերակուրք պարկեշտք տուր...»։ որ նշանակում է թեթև, դյուրամարս և այլն։

Մ. Հերացու ուշադրության կենտրոնում է եղել նաև տուբերկուլյոզը, որը, ինչպես մատենագրական տվյալներն են վկայում, շատ մեծ չափերով է տարածված եղել միջին դարերում։ Բժշկապետը դրան անվանում է «բարակացաւ» կամ «հալ և մաշ չերմ», որի առաջացման խնդրում, ըստ նրա, մեծ դեր են խաղում թերասնումը, երկար օրերով քաղցած մնալը, մարդու հոգեկան ծանր ապրումները, ֆիզիկական ծանր աշխատանք կատարելը։ Այլ կերպ ասած, Հերացին իր ժամանակին նկատել է, որ տուբերկուլյոզը սոցիալական բնույթի հիվանդություն է։ Մեր կարծիքի օգտին է վկայում նաև այն, որ խոսելով տենդային հիվանդությունների մասին, մեծ բժիշկը առանձին տեղ է հատկացնում.

¹⁰ Նույն տեղում, էջ 66։

Նաև մարդու աշխատանքի բնույթին: Այս կապակցությամբ Հերացին նշում է յարբնի, հացթուխի, ապակեգործի (տվյալ դեպքում հեղինակը նկատի է ունեցել բարձրաստիճան ջերմություն ունեցող կրակի առաջ շշեր և ապակյա այլ անոթներ պատրաստող արհեստավորներին—Ա. Վ.) մասնագիտությունը: Հենվելով կիրառական բժշկական իր բաղմամյա հարուստ փորձի վրա, նա հարյուրամյակներ առաջ արտահայտել է այն ճիշտ տեսակետը, որ տուրերկույլի բակորնական շրջանի համար բնորոշ է, ինչպես ժամանակակից բժշկության մեջ է կոչվում, հիվանդի ջերմաստիճանի սուրֆիրրիլիտետի հասկացությունը: Ինչպես տուրերկույլի, այնպես էլ մյուս հիվանդությունների ժամանակ բուժում նշանակելիս Հերացին ելնում է հիվանդի առանձնահատկություններից: Օրինակ, տուրերկույլի դեպքում մի տեսակ յուրահատուկ բուժիչ միջոց է համարել էշի կաթը, որի ընդունման համար նա մշակել է հատուկ կարգ: Միաժամանակ հիվանդին տվել է զլխացավերի, բարձր տաքության, սրտի ուժեղ բաբախումների, ընդհանուր թուլության հադի, ախտաբանական այլ երևույթների դեմ առանձին դեղամիջոցներից դուգորդված դեղապատրաստուկներ:

Մխիթար Հերացին, որպես մեծ հումանիստ և միջնադարյան հայ բժշկության ռահվիրա, ասել է իր անաչառ խոսքը նաև բժշկի թույլ տված սխալների մասին: Որոնք բարդացնում և ձախողում են հիվանդի գործերը: Դրանք, ըստ մեր հեղինակի, բժշկի գործունեության մեջ ի հայտ են գալիս երկու դեպքում: Առաջին՝ երբ բժիշկը ճիշտ չի սահմանում հիվանդի ախտորոշումը և երկրորդ՝ որպես դրա անխուսափելի հետևանք՝ հիվանդի ապարինության նպատակով ինչպես դեղորայքային և բուժման այլ միջոցառումների, այնպես էլ նրա սննդի և խնամքի վերաբերյալ բժիշկը սխալ նշանակումներ է անում:

Երկու դեպքերում էլ Հերացին բժշկի թույլ տված սխալները բացատրում է նրա մասնագիտական անպատրաստականությամբ ու բավական փորձառություն չունենալով: Միջնադարյան մեծ բժշկապետի «Ջերմանց մխիթարութիւնը» ոչ միայն սուր վարակիչ ախտաբանության վերաբերյալ իր ժամանակակաշրջանի գիտության վերջին և նոր խոսքը հաղորդող գիտական եղակի ազդեցություններից է, այլև բժշկագիտության հիշյալ բնագավառի լավագույն ձեռնարկ-հանրագիտարան: Այդ գրքին հաճախ դիմել են նրա ժամանակակից ու հետագայի հայ բժիշկները, աչն եղել է դասագիրք բժշկանոցներում սովորող ուսանողների համար: Այսպես կարծելու իրավունք է տալիս Հերացու աշխատության մեջ նյութի շարադրման մեկնաբանողական եղանակը. նա այս կամ այն գիտական հասկացություն արտահայտող հայերեն տերմինի բացատրության հետ տալիս է նույն տերմինը նաև հունարեն, արաբերեն, երբեմն էլ այլ լեզուներով: Այնուհետև գրքում հաճախ ուղղակի դիմում է իր ունկնդրին, ասելով՝ «Իսկ ես այդ իրացող օրինակ բերեմ որ այլ հեշտ հասկանայր...» և այլն¹⁾:

«Ջերմանց մխիթարութեան» ուշագիտ հետազոտությունը վկայում է նաև այն մասին, որ նրա հեղինակը գրած պետք է լինի և ընդհանուր ախտաբանության վերաբերյալ աշխատություն:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են Մխիթար բժշկապետի գրած՝ աչքի անատոմիայի, ֆիզիոլոգիայի, աչքի հիվանդությունների, ինչպես և դրանց ապարինության նպատակով մշակված վերին աստիճանի բանական դեղանյութերի դուգորդումներից կազմված մեծ թվով դեղատոմսեր:

¹⁾ Նույն տեղում, էջ 65:

Նրան են վերագրում նաև «Գիրք վաստակոց» հետաքրքիր գյուղատնտեսական ձեռնարկի թարգմանությունը, որ կատարված է արաբերենից: Հերացին բազմակողմանի զարգացած գիտնական էր: Բացի բժշկագիտությունից նա զբաղվել է նաև աստղաբաշխությամբ և գրել է «Որոտացոյց և շարժացոյց» աշխատությունը և այլն:

Մեծ իմաստասեր ու բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատությունը հայտնաբերվել է 1727 թ. Կ. Պոլսում, մի շարք հայկական ձեռագրերի մեջ, որոնք գնվել և տեղափոխվել են Փարիզի Ազգային գրադարանը: Այգ բժշկարանը առաջին անգամ հայերեն լույս է ընծայվել Վենետիկում 1832 թ.:

Անցյալ դարի քառասունական թվականներին Կ. Ֆ. Նոյմանը Wiener Jahrbücher der Literatur der Wissenschaftlichen Welt-ի 62-րդ հատորում գետնեղում է մի հոդված Մխիթար Հերացու և նրա գրքի մասին: Այնուհետև նույն տարիներին Լ. Շուլանը (L. Choulant) բժշկության պատմության իր հայտնի գրքում՝ «Ջերմանց մխիթարութիւնից» գետնեղում է առանձին գլուխներ: Հետագայում նույնը արել են Հեդերն ու Մորվիցը:

Անցյալ դարի վերջերին բժ. Վահրամ Թորգոմյանը, հայ և ֆրանսիական մամուլում մի շարք հոդվածներ տպագրելով Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» գրքի մասին, ապա և զեկուցումներ կարդալով Փարիզի Բժշկական ակադեմիայում, մեծ հետաքրքրություն առաջացրեց Հերացու նկատմամբ ինչպես Արևմտյան Եվրոպայի, այնպես էլ մեր բժշկագիտության, պատմության ու բանասիրության մեջ: Է. Զեյդելը 1908 թ. «Ջերմանց մխիթարութիւնը» ամբողջությամբ թարգմանել է գերմաներեն և տվել բազմակողմանի և արժեքավոր ծանոթագրություններ¹²: Հ. Վիրխովը, ծանոթանալով սույն թարգմանությանը, այն կարծիքն է հայտնել, որ Հերացին իր ժամանակի առաջադեմ և մեծ ավանդույթներով օժտված հայ խոշորագույն բժիշկ է եղել: Հետագայում ֆրանսիացի կլինիցիստ էմիլ Լեգրենը «Տաք երկրների տենդային հիվանդություններ» խորագիրը կրող իր մենագրության մեջ (1913 թ.) կանգ է առել նաև Մխիթար բժշկապետի աշխատության վրա¹³: 1955 թ. Երևանում լույս ընծայվեց «Ջերմանց մխիթարութիւնը» ռուսերեն, ընդարձակ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով: «Ջերմանց մխիթարութեան» գերմաներեն հրատարակության առաջաբանում է. Զեյդելը գրում է. «...Երբ մենք առանց կանխակալ կարծիքի միմյանց հետ ենք համեմատում («Ջերմանց մխիթարութիւնից») ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ գրած Հելդեգատդի «Բնագիտությունը» մեր հայ վարպետի հասած արդյունքի հետ, ապա տեսնում ենք, որ վճռականորեն վերջինիս պետք է հանձնենք դափնեպսակը՝ բնության ավելի արմատական իմացության, ավելի հետևողական և ավելի ինքնուրույն մտածողության, ինչպես նաև սխոլաստիկական նախապաշարմունքներից լիովին զերծ լինելու համար»¹⁴:

Բժշկության բնագավառում նրա առաջ քաշած տեսական մի շարք խնդիրները, ինչպես նաև կիրառական բժշկության արվեստի մեջ նրա մշակած բազ-

¹² E. Seidel, նշվ. աշխ.:

¹³ Վերոհիշյալ տվյալները քաղել ենք ակադ. Լ. Ա. Հովհաննիսյանի «Բժշկության պատմությունը Հայաստանում» գրքից, հատ. II, Երևան, 1946:

¹⁴ E. Seidel, նշվ. աշխ.:

մաթիվ արդյունավետ գործողությունները շարունակեցին դարգացնել, նրա ժամանակակից ու հետնորդ բժիշկները: Բժշկական հարցերի ուսումնասիրության գործում ճիշտ դիրքավորման ձգտումով, կիրառական բժշկության բնագավառում կուտակված փաստերի հիման վրա արվող գիտական ճիշտ ընդհանրացումների իր փայլուն կարողությամբ Մխիթար Հերացին առանձնահատուկ տեղ է զբաղում միջնադարյան բժշկության պատմության մեջ:

МХИТАР ГЕРАЦИ

(К 850-летию со дня рождения)

Проф. А. С. КЦОЯН

(Резюме)

Мхитар Гераци — один из выдающихся ученых и врачей средневековой Армении. Критически используя античную, византийскую и созданную на арабском языке классическую медицинскую литературу народов Востока и опираясь на свою богатую врачебную практику, он написал в 1184 г. уникальный труд «Утешение при лихорадках», посвященный острозаразным заболеваниям. Эта книга впервые была опубликована в 1832 г. в Венеции. Написана она доступным для народа языком и пользовалась широкой известностью.

Патологию человека Гераци рассматривал в тесной связи с множеством факторов внешней среды. В патогенезе инфекционных заболеваний он выдвинул новую концепцию о «плесневенных гуморов», догадываясь о существовании инфекции. Мхитар Гераци был сторонником профилактики и поэтому считал, что самые ничтожные патологические явления надо лечить с момента их появления.

Из других медицинских трудов Гераци известны: небольшое сочинение «О драгоценных камнях и их лечебных свойствах», «Анатомия глаза», фрагмент из не дошедшего до нас труда о глазных болезнях.